# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N3

**«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի և «ԻՐՏԻԳ» ՍՊԸ-ի միջև 2025թ. հունիսի 26-ին կնքված N ՀՏԶՀ-ԱՏԵԽ-ԽԲՄ-ԾՁԲ-2025/5/2 ծածկագրով տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

**ք. Երևան** «09» 04 **2026թ.**

**Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը**, ի դեմս գործադիր տնօրեն **Սարգիս Բաղինյանի,** ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԻՐՏԻԳ» ՍՊԸ-ն,** ի դեմս տնօրեն **Տ. Պողոսյանի,** ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, համատեղ կոչվելով՝ Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև ***2025թ. հունիսի 26-ին կնքված ՀՀ Լոռու մարզի «Մեծավանի ԱԿ» ՊՈԱԿ-ի կառուցում» ծրագրի շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների*** պետական գնման **N ՀՏԶՀ-ԱՏԵԽ-ԽԲՄ-ԾՁԲ-2025/5/2** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1.1 և 7.5 կետերի դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի 4-րդ «**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**» բաժնի 4.1-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ՝

«4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 9 667 103 **(ինը միլիոն վեց հարյուր վաթսունյոթ հազար մեկ հարյուր երեք)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որից 3 769 103 (երեք միլիոն յոթ հարյուր վաթսունինը հազար մեկ հարյուր երեք) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է տեղակապվող մասի շինարարական աշխատանքների **ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների** արժեքը:

2. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը:
3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:
4. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ | **«ԻՐՏԻԳ» ՍՊԸ** |
| Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31 | Հասցե՝ ՀՀ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 40/28 |
| ՀՎՀՀ՝00846441 | ՀՎՀՀ՝ 06954405 |
| Հ/Հ՝ 900011058865 | Հ/հ՝ 220053335679000 |
| Կենտրոնական գանձապետարան | Բանկ՝ «Ակբա բանկ» ԲԲԸ Լոռի մ/ճ |
| Գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյան | Տնօրեն **Տիգրան Պողոսյան** |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |